



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ՀԱՆԳԻՍ**  
**S. ԱՆՈՒՇԱՎԱՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐԹԻՆԵԱՆԻ**

Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հոգեւորականաց Դասը, Կրօնական ժողովը եւ Ազգային Վարչութիւնը խոր ցաւով կը գուժեն Հայց. Առաքելական եկեղեցւոյ ու մեր Թեմի բազմավաստակ հոգեւորականներէն՝ Արժ. Տ. Անուշաւան Ա. Քիւյ. Արթինեանի վախճանումը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Յունուարի երեկոյեան, յետ երկարատեւ հիւանդութեան:

Վախճանեալ Զահանայ Հայրը շուրջ 50 տարիներու նուիրեալ ծառայութիւն ունեցած է մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին: Զահանայական ձեռնադրութիւնը ստացած է 1961ին, ծառայած է Յունաստանի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան ու Արեւմտեան թեմերուն մէջ: Արեւմտեան մեր Թեմին մէջ անոր ծառայութեան գլխաւոր դաշտը եղած է Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցին, որուն հիմնադրութեան գլխաւոր դերակատարներէն է եղած: Վերջին տարիներուն, ան հանգստեան կոչուած էր:

Տեր Հօր վերջին օծումն ու թաղման կարգը տեղի պիտի ունենան Երեքշաբթի, 19 Յունուար 2010, կէսօրէ առաջ ժամը 10ին, յընթացս Ս. Պատարագի, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Այս տխուր առիթով, խորին ցաւակցութիւն երեցկին Սալբի Արթինեանի, զաւակներուն՝ Սթիւի, Խաժակի եւ Հուրիի եւ ընտանեկան պարագաներուն ու բոլոր հարազատներուն:

Յիշատակն արդարոյ օրհնութեամբ եղիցի:

**IN MEMORIAM**  
**ARCHPRIEST FR. ANOUSHAVAN ARTINIAN**

It is with deep sorrow that we learned of the passing of Archpriest Fr. Anoushavan Artinian which occurred on Wednesday, January 13<sup>th</sup>, 2010, following a long illness.

Archpriest Fr. Artinian, who was retired at the time of his death, served the Armenian Church for nearly 50 years, specifically in Greece and the Eastern and Western United States. He served for many years at St. Mary's Church in Glendale, playing a large role in the establishment of the church.

Extreme Unction will take place during funeral mass on Tuesday, January 19<sup>th</sup>, at 10:00 a.m., at St. Mary's Church in Glendale, followed by the burial service.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, clergy, and the Religious and Executive Councils express their condolences to Yeretsgin Salpi Artinian, children Steve, Khajag, Hourii, and their families.

May his memory remain ever blessed.

\*\*\*

## **ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԴՆԷՔ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Յինգշաբթի, 14 Յունուարին նշուեցաւ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան տօնը:

Այս տօնը նաեւ անուանակոչութեան տօնն է Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ: Առ այդ, Կիրակի, 17 Յունուարին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի եկեղեցւոյ մէջ: Պիտի պատարագէ եւ իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան: Պատարագի աւարտին տեղի պիտի ունենայ մատաղօրհնէք: Ներկայ պիտի ըլլան Ազգային Կարչութեան ու միութենական ներկայացուցիչներ:

Ս. Պատարագէն ետք, ու եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ աւանդական տօնակատարութիւնը: Ծաշի կողքին, նախատեսուած է գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն պիտի բերեն եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի ու Ազգ. Ռոգ եւ Ալեք Փիլիպոս Երկրդ. վարժարանի աշակերտները: Այս ձեռնարկը առիթ է նաեւ, որ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը հիւրընկալէ ու գնահատանքի արժանացնէ եկեղեցւոյ ծառայողները:

## **EPISCOPAL DIVINE LITURGY ON THE NAME DAY OF ST. GARABED CHURCH**

According to the Armenian Church calendar, Thursday, January 14 was the Feast of St. John the Forerunner. This feast is also the name day of St. Garabed Church in Hollywood.

Thus, on Sunday, January 17<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church. The blessing of *madagh* will take place at the conclusion of Divine Liturgy.

The parish Pastor and Board of Trustees have organized a reception on this occasion, which will take place immediately after the church service at "Karapetian" Hall. Sunday School students and Rose and Alex Pilibos School students will participate in the cultural program.

\*\*\*

## **ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ ԱՂՕԹՔ ՅԱՅԻԹԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ ՉՈՅԵՐՈՒՆ ՅԱՄԱՐ**

Ծանօթ է, որ Երեքշաբթի, 12 Յունուարի յետմիջօրէին, Ատլանտեանի Յայիթի կղզիին մէջ տեղի ունեցաւ ահաւոր ու մահասփիւռ երկրաշարժ մը, իւլելով մեծաթիւ զոհեր ու պատճառելով նիւթական հսկայական վնասներ:

Չոհերուն շարքին են ականաւոր անձնաւորութիւններ. զոհ գացած են նաեւ երկրին Կաթողիկէ եկեղեցւոյ Առաջնորդը՝ Ժոզէֆ Սերժ Միոթ Արքեպիսկոպոսն ու բազմատասնեակ հոգեւորականներ: Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, յանուն մեր Թեմի ժողովականութեան ու հաւատացեալներուն, ցաւակցական գիր մը յղեց Կաթողիկէ եկեղեցւոյ Լոս Անճելըսի Առաջնորդ Կարտինալ Ռաճըր Մահոնիի:

Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Կիրակի, 17 Յունուարին, մեր եկեղեցիներուն մէջ, յընթացս Ս. Պատարագի, Տեր Ողորմեայի յատուկ աղօթք պիտի բարձրացուի երկրաշարժին բոլոր զոհերուն համար:

Այսու կոչ կ'ընենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ մարդկային այս աղետին առիթով, մեր եկեղեցիներուն մէջ աղօթակից ըլլայ բիրաւոր զոհերուն հոգիներուն համար: Կարելի է նաեւ նիւթական օժանդակութիւն տրամադրել աղետեալներուն, նուիրատուութիւն կատարելով այս նպատակին ծառայող բարեսիրական կազմակերպութեանց:

## **PRAYERS FOR THE VICTIMS OF THE HAITI EARTHQUAKE**

As news reports emerge from Haiti following the devastating earthquake which shook the island nation on Tuesday, January 12<sup>th</sup>, 2010, we have learned that Archbishop of Port-au-Prince, Monsignor Joseph Serge Miot, and over one hundred priests are among the victims.

On Thursday, January 14<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a letter of condolence to H.E. Cardinal Roger Mahony, expressing his sympathies on behalf of Prelacy clergy and faithful on this tragic loss of life.

By the ordinance of the Prelate, prayers will be offered for the victims of the earthquake during Divine Liturgy on Sunday, January 17<sup>th</sup>.

We call upon our faithful to participate in these prayers and also in the relief efforts by extending a helping hand through the many humanitarian organizations involved in this effort.

\*\*\*